

8. Փոխարքոյի ամուսինը՝ կոմսուհի Ելիզաւետա
Անդրէեվսան Եջմիանում եղած ժամանակ 1906 թ., դեկտեմբերին, մատենադարանում տեսել էր իւր պապի (մօր հօր)՝ նախկին փոխարքայ իշխան Միկայիլ Սիմիոնիչ Վարանցովի պատկերը թղթի վերայ, որ պահւում էր ներսէս ե. կաթողիկոսի օրերից։ Կոմսուհին խոստանում է ուղարկել հանգուցեալ իշխանի իւղաներկ պատկերը, ի կատարումն այդ խոստման կոմսուհին դեկտ. 27-ին մի գրութեան հետ Տ. Տեղակալի անունով ուղարկել է այդ պատկերը շքեղ շրջանակով, նուէր Մ. Աթոռի թանգարանին. խոստանում է շուտով ուղարկել և իւր տատի պատկերը նորին Սրբազնութիւնը շնորհակալութիւն յայտնեց նամակով կոմսուհուն այդ ուշադրութեան համար։

Մեր ընթերցողներին յայտնի է անցեալ թուականի հոկտ.-նոյեմբ. համարից, որ Զիբրալտարի Վիլիամ եպիսկոպոսը այցելութեան էր եկել Մ. Աթոռ և բերել էր Անգլիքան եկեղեցու գլխաւորի՝ Կենտրոնական արքեպիսկոպոսի թուղթը մատուցանելու հանգուցեալ Կաթողիկոսին։ Այդ թուղթը մնացել էր անպատճառիսան Ս. Կաթողիկոսի մահուան պատճառով։ Այժմ Տեղակալ Սրբազն Գէորգ արքեպիսկոպոսը մի գրութեամբ յայտնում է Կենտրոնական պատճառիսան պատճառով։ Ահա այդ պատճառիսանը։

Տեսոն Տեսոն Բանդալի Արքեպիսկոպոսի Կենտրոնի նախամեծարին Անգլիական եկեղեցւոյն ի Տեղակալէ ծայրագոյն պատրիարքի եւ Կաթուղիկոսի ամենայն Հայոց Քրիստոսաւանդ ողջոյն։

Սրբազն եղայր ի Քրիստոս,

Զգիր ողջունի Զերոյ ի ձեռն գերապատիւ Եպիսկոպոսի Զիբրալտարի Տէր Վիլիամ Կոլինս ընկալաւ նորին

Արբութիւնն վեհափառ կաթուղիկոսն ամենայն Հայոց քերկրութեամբ և միսիթարութեամբ սրտի մինչդեռ ի հիւ ւանդագին վիճակի էր և չեղի հառու առնել զպատասխանին՝ ի խորին ծերութեան փոխեցաւ յաստեացս:

Նուաստութեանո մերում վիճակեցաւ յետ վախճանի ծերունազարդ Հայրապետին յանձն առնուլ զպաշտօն տեղակալութեան նորին, ուստի և պատիւ մեծ համարիմ երկարողիւս յայտնել Արբաղնութեանդ Զերում զխորին չնորհակալիս վասն սրբանուէր ազօթից Զերոց և բարեացակամ զգացմանց առ առաքելական եկեղեցին Հայաստանեայց Կցորդեմք և մեք դազօթո ջերմագինո վասն բարօրութեան և պայծառութեան Անդղիական եպիսկոպոսական եկեղեցւոյն:

Հաճեցարուք Տէր, ընդունել զխորին հաւաստիս սնձնուիրութեան մերոյ:

Հաճեցարուք Տէր, ընդունել զխորին հաւաստիս սնձնուիրութեան մերոյ:

ԳԵՐԵԶ. ԱՐՔԵՊԻՄԿՈՊՈՍ ՍՈՒԲԷՆԵԱՆՑ

S. Կ.

Ե 14-ն Յունուարի 1908 ամի

և Ա. Էջմիածին,

Յունուարի 14-ին հանգուցեալ կաթուղիկոսի անուանակազութեան օրը հոգեհանգիստ կատարուեց Մ. Տաճարում։ Շահաղիղի յիշատակին ևս հոգեհանգիստ կատարուեց նորա թաղման օրը։

Այս համարից սկսում ենք հրատարակել Տաճկահայոց մասին մի շարք հետաքրքրական յօդուածներ։ Երիտա-

սարդ հեղինակը, որ մի քանի լուրջ գրքեր ունի գրած
արդէն և յայտնի է հրապարակախօսութեան մէջ, մեր
խնդրանօք ամփոփ նկարագրութիւններ է պատրաստել
այն բոլոր կարևոր խնդիրների մասին, որոնք նշանակու-
թիւն ունին ազգային, եկեղեցական և քաղաքակրթական
տեսակէտով։ Ներկայ համարում տպուած յօդուածը կա-
րող է նմուշ լինել, թէ որքան քաջ տեղեակ է նա իւր
նկարագրած նիւթերին։ Հետեւեալ տեսրակում կտպենք
«Տաճկահայոց գպրոցական խնդիրը կառավարութեան հետ»։
Մեր ընթերցողների ուշագրութիւնն ենք հրաւիրում այս
յօդուածների վերայ, որովհետեւ մամուլն առ հասարակ
հնարաւորութիւն չունի ճշգութեամբ հետեւու մեր Տաճ-
կահայ եղբայրների կեանքին։

Ներկայ թուականին խմբագրութիւնս իւր անմիջա-
կան աշխատակիցների օգնութեամբ հնարաւորութիւն կու-
նենայ ոչ միայն լիովին հետեւել մեր հոգեոր-քաղաքա-
կրթական կեանքին և քննութեան ենթարկել նորա-
գրական, գիտական և հասարակական երևոյթները, այլ
և յայտնել իւր իղձերն ու ցանկութիւնները Հայրապե-
տական աթոռի, Ազգային եկեղեցու և նրանց հետ առըն-
չութիւն ունեցող կենսական հարցերի մասին։ Մեր նշա-
նաբանը կլինի լրջութիւն, անաչառութիւն և անկեղծ
վերաբերմունք գէպի մամուլի կոչումը։ Յոյս ունինք, թէ
կարող կլինինք գրական և բանասիրական գանձանակի մէջ
ևս մեր լուման ձգել։

«Երարատի» ներկայ համարը բաղկացած է 8 մամու-
լից՝ փոխանակ սովորական 6-ի։

Ծննդեան տօներին ձեմարանի աշակերտները մի
քանի ներկայացում տուին ժամանցի և վարժութեան
համար։ Ներկայ էին միաբաններից ումանք, ուսուցիչներն
իրենց ընտանիքով և ժողովրդից բաւական բազմութիւն։

Յաւալի էր տեսնել, որ գիւղից թափուել էր բաւական խառը բազմութիւն, որոնք ոչ մի կարգի չէին կամենում ենթարկուել և իրենց այնպէս տգեղ էին պահում, որ վարչութիւնը ստիպուած էր մի երեկոյ յետաձգել ներկայացումը:

Յունուարի 29-ին Տ. Երուանդ վարդապետ մի դասախոսութիւն կարգաց Ճեմարանում «Բարելոնական քաղաքակրթութեան և կրօնի ազգեցութիւնը Խորայէլի վրայ» վերնագրով։ Դասախոսութիւնը հետաքրքրական էր, աշակերտների և ուսանողների համար նորութիւն։ Վարչութիւնը ծրագրել է մի շարք այդպիսի դասախոսութիւններ, որոնցով ուսուցիչները արտաքոյ սովորական դասերի իրենց սաներին պէտք է ծանօթացնեն գրական-դիտական շարժումների և երեսյթների հետ։

† Յունուարի 2-ին ծանը հիւանդութիւնից յետոյ վախճանուեց ճեմարանի IV գասարանի աշակերտ Մարտ. Ալթունեանը—մի ընդունակ և պարկեցած մանուկ, որ անդգուշութեամբ մրսել էր և ապա տիֆով հիւանդացելու Ամբողջ աշակերտութիւնը և ճեմարանը ողբում են իւրեանց ընկերոջ ու սանիկի անակնիալ մահը:

Պէտք է ի նկատի առնել, որ այս տարի տիֆը, ջրի անպիտանութեան պատճառով, անպակաս էթ ճեմարանում։ Մինչօրս, սեպտեմբեր ամսից ի վեր, ճեմարանը տասն տիֆով հիւանդէ ունեցել։

մի պահանջման հետական միջմաս և առաջին
մասնաւորակ և պատմակ միայն կազմակերպման մասը,
մասնաւորակ ուղարկելու մեջ լուրջման պատմակը և առաջին
մասնաւորակ մասնաւորակ և առաջին պատմակը և առաջին